

891.99

С-51

ԱՐՄ.
2-554a

- 6 NOV 2011

Գ Ր Ի Գ ՈՐ Տ Ա Լ Ե Ա Ն

891.99

6-57


201

ԱՆՋՈՒՍՊ ԱՐՇԱԻ

Լ

939

Այս ստեղծի երկունքը
Պէտք է ծնի մեզնոր կեանք,
Տենչալի վառ ապագան
Պահանջում է մեզ փրկանք»



Տպարան «ՇԻՐԱ.Կ» Ալեքսանդրապոլ
1 9 1 5

103 13 JUL 2013

47577



ՆՈՐ ԲՈՒՅԱՐԱՆ

Արև ծագեց, գարթիր ով քաջ,
Զարթիր քնէդ խոր դարևոր,
Քաշիր սուրբ անցիր յառաջ,
Ահա մեծ գործ քեզ կարևոր:

Դարեր անցան գլխէդ խաւար,
Այժմ պայծառ օր է ծագել,
Եթէ կուզես վերջիդ մի ձար
Քեզ նոր բուժարան է բացւել:

Մի հզօր ձեռք ունիս պաշպան
Ելիր անվախ առիւծ կորած,
Կորած փառքըդ քեզ յետ կտան
Թշնամուկ արեամբ պսակած:



39964-63

Դէն դուրս արի ննջարանէդ,
Անա՛, քեզի լայն ասպարէզ,
Ծննդավայր սուրբ վաթանէդ
Վանիր գայլեր դաժան երես:

Այժմ՝ չունիս շղթայ, կապանք,
Ազատ սարեր, ազատ ձորեր,
Թռիր, հասիր, կամ մահ կամ
կեանք,
Գատի վճուի արդար օրեր:

Արծւի թևեր, անծայր թևեր
Արդէն փռած քո վին գլխին,
Զօրքեր դառած ուղմի հաւքեր
Իսպառ ջնջեն գոռ ոտխին:

ԾԱՂԿԱԾ ԳԱՐՈՒՆ

Ծաղկած գարուն քո ալ վարդէն
էլ ինձ անուշ բոյր չ'կայ,
Բաժան ընկայ անգին գարդէն
Ո՛ւր կորուցի լուր չ'կայ:

Օ՛հ, սիրտս խիստ եարալի է,
Ո՛չ մէկ բանի ջանք չունիմ,
էս գլուխս բալալի է,
Առանց նորան կեանք չունիմ:

Կարմիր արև, ի՞նչ ես վառել,
Ո՛ւր համար ես յոյս տալիս,
Գիշեր դու էլ՝ ցերեկ դառել,
Կնքաւ, եարս չի գալիս:

Ի՞նչ ասի որ սրտին զիպաւ
Թողեց թռաւ իմ սրտէն,
Զոյճւմ մնաց, թէ տեղ գտաւ,
Մէկ լուր տւէք իմ վարդէն:

Ա Շ Խ Ա Ր Հ

Ի՞նչ բալայ ես էյ աշխարհ,
Մարդկանց տանջում չարաչար,
Մեզ գցել ես դէս ու դէն
Արած անմիտ սիրահար:

Քեզանում բան չեմ գտնում,
 Իզուր իզուր իմ տքնում,
 Ծոցդ լիքն է ցաւերով
 Դեռ ես կեանք եմ որոնում:

Մէկը կուշտ է ման գալիս,
 Մէկը քաղցած է լալիս,
 Մէկը հիւանդ կը տքայ՝
 Մէկը ուրախ պար գալիս:

Համա որքան համեղ ես,
 Խելօք մարդկանց լաւ դեղ ես,
 Ինձ նման գուրկ տկարին
 Շատ զրգուելի ազեղ ես:

ՍՈՍԿԱԼԻ ՀՐԴԵՆ

Տասն և ին դար տաս չորս թւի,
 Սոսկալի հուր տեսարան,
 Նման դու մեծ արեան ծովի՝
 Ինչպէս անգութ դատարան:

Վայ այն աչքին որ քեզ տեսաւ
 Թոյն ու կակիժ թափ սուիր,
 Մարդկանց գլխին դժոխք դարձաւ,
 Ի՞նչ անեղ տարափ սուիր:

Ո՞րքան հանճար քո մէջ կորան,
 Կորան անդարձ աշխարհից,
 Ո՞րքան տաղանդ ընկաւ դարան,
 Ոչ ոք չեղաւ կարեկից:

Սե մութ քօղով մեղ ծածկեցիր,
 Պայծառ երկրին փակ դարձար,
 Շատ հարուստներ մերկ թողեցիր,
 Մէկ անշէջ կրակ դարձար:

Արիւն արցունք հեղեղ կազմած
 Քանդում, քշում յոյս, բարիք,
 Դառն ժամեր հրդեհ կտրած՝
 Այ սոսկալի մեծ չարիք:



ՀԱՅԵՐ, ՈՍԿԻ ԺԱՄԵՐ

Հոյսը բացելու արդէն մօտեցաւ,
 Արշալոյս աստղը խայտապ իւր ծովէն,
 Դաժան զիշերը կորաւ չքացաւ,
 Վեր ել, գորս արի Մորփէի գրկէն:

Շատ երկար քնար ճնշող յարկի տակ
 Խառն ի խուռ պղտոր երազի ծոցում,
 Մօտ է ծագելու պայծառ արեգակ՝
 Ծագկաբոյր ձորէն արաուան է երգում:

Սևահեր կուսանք ծիրանի հագած
 Սափօրն յուսերին աղբիւր են վազում,
 Եւ քո եղբայրներ զէնքերով զուգւած
 Շարքով անհամբեր քեզ են սպասում:

Ահա ոսկեշող թանկագին ժամեր,
 Ահա քեզ շաւիղ հարթ ու ապահով,
 Թոխր, սլացիւր, այսպէս պայմաններ
 Ձեռք չեն ընկնելու հագար դարերով:

Այս սոսկալի երկունքը
 Պէտք է ծնի մեզ նոր կեանք,
 Տենչալի վառ ապագան
 Պահանջում է մեծ փրկանք:

ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄ

Ազգ ազգի դէմ կռիւ մղում խառնագին
 Որքան աչքեր պիտի ողբան զառնագին,
 Եւ անհամար մարդիկ իբրև դաշտի խոտ
 Զո՞ն են գնում եղած զժբաղզ ու կարօտ:

Դրախտ երկիր արդէն դժուրք ես դառել,
 Ազգերի մէջ սիրտ ու սէրքն է սառել,
 Զարգում, ջնջում իրար անմիտք ան-
 խըտիր,
 Դու չար ոգի գազիր կամբզ կատարիր:

Անտէր անճար ծեր ու մանուկ երեխան
 Սովից ցաւից ինչպէս պիտի մորմօքան,
 Իսկ նոր ծագկած հարս ու աղջիկ ձեր
 դարտէն
 Երգեր հիւտեմ, գովեմ, երգեմ իմ սըր-
 տէն:

Կանցնին տարիք կանցնին դարեր ու
 կերթան
 Զարդ ու փշուր թողած փայլուն ապա-
 գան,
 Սակայն ծնւած այն զաւակներ աշ-
 խարհին
 Որքան անէծք պիտի թափեն մեր գըլ-
 խին:

ՍՐԻՐ ԳԵՐԱՆԴԻՆ

Հասել են արտեր, սրիւր գերանդին,
 Շտապիր քանի կարկուտ չի եկել,
 Հաւաքիր կորիչ քաղւոր թանկագին,
 չեղեղ փոթորիկ իրար են անցել:

Դէհ, մի կորցնիր ոսկի ժամերդ,
 Այս թանկ օրերը ձեռք չեն ընկնելու,
 Կարկուտ կը տեղայ ջարդէ արտերդ,
 Դարձեալ կ'մնաս քաղցած տանջելու:

Հարս ու աղջիկներ փերիներ դարձէք,
 Գիշեր ու ցերեկ անքուն, անդատար,

Քաղւորի քրտնած ճակատը սրբէք,
 Զլինի թէ գործը մնայ անկատար:

Մեծ գործին պէտք է և մեծ աշխատանք,
 Ով ապրել կուզէ թող վաղ մօտենայ,
 Միմիայն ջանքով, տանջանք տառապանք
 Պէտք է սպառւի և անհետանայ:

ՄԱՅՐ ԵՒ ԶԻՆԻՈՐ

Նանէ ինչո՞ւ ման կուզաս
 էս աւերակ չոլ վայրում,
 Մաղիկ, մաղիկ է՛ր կուլաս,
 Աճաք ի՛նչ էս որոնում:

Օրը մի՞տեց տուն չունի՞ս,
 Աստղեր ելան, մի կենայ,
 Գիշեր դարձաւ, քուն չունի՞ս,
 Ողբը վէրքս կը բանայ:

Դարտս մեծ է էս սարէն,
 Դարտիս դարման եմ ուզում,

է՛հ, վազն արի իմ սրտէն,
Եարիս մահալամ եմ փնտրում:

Էն մէկ ու ճար թառլանս
Տարան, տարան էլ չեկաւ,
Էրնէկ դուրս գար էս ջանս,
Զինուոր դնաց յետ չեկաւ:

Նանէ, ես էլ եմ զինուոր,
Ազիզ եարից բաժանուած,
Քեզ նման մէկ սգաւոր
Կուլամ ջանէս բեզարած:

Մեր փայ աստղերը ընկան,
Մենք էլ երթանք ջուրն ընկնենք,
Թող ձկները մեզ կուլ տան,
Բայքի դարտից ազատւինք:

Մէկը գովեց իր եարը,
Մէկն էլ անուշ իր որդին,
Այս աշխարհի գոհարը
Նորանք էին թանկագին:

Բայց շատ մեծ է ազգի սէր,
Եար ու որդի պլիտ մոռնալ,
Մեզը նման հազարներ
Սիրով սրտով զոհ դառնալ:

Ով չի սիրում ազատ կեանք,
Թող նա ողբան, երկնչի,
Դաժան շղթան ու կապանք
Ամենից թանկ ճանաչի:

Նանէ, անի, նանէ, էս ի՞նչ դիւան է,
Եարից գատուելը, մէկ գուլում բանէ
Տղայ, հեռացի, եարըդ մոռացի,
Մէկ ու ճար պալէս ձեռքէս թողցի:

ԻՆՉՊԷՍ ՉԼԱՄ

Արի տեսնեմ ուրաից կուգաս,
Նստել ճամփէտ կ'սպասեմ,
Ալւան թռչնիկ, ինչո՞ւ կուլաս,
ուղարտիդ ճր ասեմ:

Արբի տեսնեմ խապար չունի՞ս
 էն տըղից սև ձիաւոր,
 ես լաւ գիտեմ, որ դարտ ունիս,
 Գուն էլ քան ինձ սևաւոր:

Կարելի է կորուցել ես
 Վարուժանդ գեղեցիկ,
 Անտէր մենակ մնացել ես
 Ինչպէս թոշնած մի ծաղիկ:

Ինչպէս չլամ, գերի ընկաւ
 Սև ձիաւոր էն աղէն,
 Վարուժանս թողեց թռաւ
 էն դրախտէն իմ բաղէն:

ԱՅՍ ԻՆՉ ՉԱՐԻՔ Է

Արեան ամպերով երկիրը գոցւեց,
 Ամեն տեղ հրդեհ, ամեն տեղ սարսափ,
 Խղճուկ ամբոխը դառ վշտով լցւեց,
 Կորաւ սփոփանք, սւր գիմենք ետ րապ:

Չ'կայ մի աշխարհ որ մեր վերքերին
 Գեղ ու ճար դառնայ, ստեղծէ նոր
 կեանք,
 Այս ինչ չարիք էր մեր գլխին բերին,
 Երջանիկ կանքը դարձաւ տառապանք:

Ինչպէս որ Աստուած դրախտից վանեց
 Ադամ Եւային, գլորեց աշխարհ,
 Ահա մի պատկեր նորից նկարւեց
 Մեր անգութ սրտի արարօրն յարմար:

ՉԿԱՅ ՈՒ ՉԿԱՅ

Այս օրն էլ գնաց, արևը իջաւ,
 Երկիրքը փակւեց գեռ նա չի դառնայ,
 Թողեց ինձ անտէր, գնաց հեռացաւ,
 Մի խապար չունիմ չ'կայ ու չ'կայ:

Ահուելի ծովում փրփրած կատաղած
 Ալիքների գէժ կուռղ էն նաւը,
 Իսկ էն նաւի մէջ ինձնից խռոված
 Մաւ, սլացաւ սրտիս կաքաւը:

Դանրտեր ու վճարներ, արև, մի ծագիր
Քնքոյշ հոտաւէտ ծաղկունանց վրա,
Վարդեր խոնացէք, բլբուլ մի երգիր,
Երկնից շող աստղեր էլ միք շողշողա:

ՀԱՅ ՀՈՎԻԻ

Ի՞նչ ես լուռ նստել էյ պանդուխտ հո-
վիւ,
Վեր ան սրինգդ նւագիր հանդարտ,
Գիտեմ որ սիրտդ ցաւերով անթիւ
Մաղիկ ու մաղիկ լալիս է մարմանդ:

Վաթանէդ հեռու, վաթանէդ բաժան
Օտար սարերում ոչխար կարածես,
Դու մի ժամանակ էիր մեծ իշխան,
Իսկ այժմ սարուկ անտէր կորած ես:

Հաւաքիր ուժդ, մի լեր լուռ տխուր,
Կրկին հնչեցրու սրինգդ նախկին,
Մի մնար հեռու վաթանէդ իգուր,
Կը լինի հօտդ գայլերին բաժին:

Քո հով ծաղկագարդ հարազատ սարեր
Վաղուց բոյն դարձած սև ագռաւներին,
Կրկին քեզ կըստան տար անդ քո հօտեր,
Ձէն տուր սրինգով քնած հաւքերին:


ԶԱԼՈՒՄ ՎԱՐԴԸ

Մըրիկն անցաւ լեռան լանջէն
Հանդ ու հովիտ վայլեցին,
Ծաղկունք հագած սարի լանջէն
Թռչունք ազատ երգեցին:

Վտակն անուշ քշփշալով
Ոլոր մոլոր վար կուգայ,
Վտիդ ծաղկանց համբոյր տալով
Մամուտ քարին շող կուտայ:

Բլբուլն իջաւ վարդի Թփին
Ողջոյն տուեց ու թռաւ,
Թռաւ գնաց ջրի ափին,
Կուրծքը թռչեց գլխով գառաւ:

79964-67



Կրկին քնքոյշ իւր վարդի մօտ
 Նախկին երգը ըսկսեց,
 Սիրոյ երգը պապակ կարօտ
 Քեաֆիր վարդը չը լսեց:

Լեռան լանջին դուման չ'կայ,
 Զալում վարդին սիրտ ու սէր,
 Էլ բացելու գիւման չ'կայ,
 Բլբուլն էղաւ բնաւէր:

Զալում վարդը չ'բացեաց,
 Սոխակին մահրում թողեց,
 Կուրծքը զարկեց փշերին,
 Վարդէն բեմուրագ լռեց:



ԱՀՌԵԼԻ ՎԻՇԱՊԸ

Զարհուրելի պատերազմը
 Թնդացրեց արար աշխարհ,
 Քանդեց երկրի խաղաղ կազմը,
 Արիւն կուլան ողջ քար ու սար:

Ո՛վ էր առիթ դարձաւ գործին
 Արիւն արցունք խառնեց իրար,
 Նզովք նրա դաժան անձին
 Այրւի, տանջի միշտ չարաչար:

Մայր ու որդիք բիւր հագարով,
 Ո՛հ պիտ մնան որբ ու այրի,
 Լան ու ողբան ահեղ ցաւով
 Կարօտ պապակ կորած եարի:

Մզգեր էին ապրում խաղաղ
 Իրենց սրտով իրենց դարտով,
 Տնցեց պայթեց երկիրն աւաղ,
 Ամեն ուրեք լարեց դաւով:

Այս անուրի կոյր վիշապը
 Ամբողջ աշխարհն է կլանում,
 Եւ փշրրտում սիրոյ կապը,
 Միթէ երկինք ցած չես նայում:

Կանաչ դաշտեր էլ չէք ծաղկում,
 Գնտակ ու սուր կ'չողոզողան,
 Ի՞նչ հերոսներ ձեր լայն ծոցում
 Արեան ծովում պիտի լողան:

ԴԱԺԱՆ ՈՐՍՈՐԴՆԵՐ

Դաժան որսորդներ անմեղ մառալին
 Զարկիք թողեցիք ձագեր լալազին,
 Դաժան գնդակով արեցիք հանդէս
 Սև քօղ քաշեցիք ծաղկած անտառին:

Ի՞նչպէս չ'տեսաք ձագուկներ փոքրիկ
 Հանգիստ, անխոով գործեցիք չարիք,
 Լաւ է որ խապառ ջնջւիք աշխարհէն
 Զազիր ոճրագործ կայէնի որդիք:

Էդանի մէկ ժամ ինձ իրաւունք տան
 Ինչպէս անաչառ կանեմ դատաստան,
 Մի չ'տեսնեա՞ծ անսովոր վճիռ
 Բանտերից հեռու առանց կախաղան:

ԱՆԷԾՔ ՎԻԼՀԷԼՄԻՆ

Շղարշ ամպեր այդ ո՞ր ծովից
 Մաքուր ջուր էք վերցնում,
 Արդեօք ո՞րտից, ի՞նչ ջրերից
 Զուլալ անձրև էք ցօղում:

Միթէ այժմս կանց այնպէս ծով
 Որ ձեզ ջուր տայ անարատ,
 Երկիր լցւեց ալ արիւնով
 Զմնաց մէկ գետ ազատ:

Կարծեմ որ դուք այս պայմանում
 Ամեն աշխարհ ամեն վայր,
 Պիտի լող տաք արեան ծովում
 Անմեղ արեան, ծայրէ ծայր:

Կապոյտ երկնից մեր լուսնեակն Ն
 Ճերմակ հագած ման կուռայ,
 Արնոտ երկրին մեզ անվայել
 Դեռ իր լոյսը շող կուտայ:

Թող այն արքան իսպառ ջնջւի
 Անհետ կորչին գահն ու թագ,
 Արեան բոյսեր պսակ փնջւի
 Իւր արձանին գոռ պարծանք:

Ե Ր Գ Ի Չ

Երկինքը պարզեց մռայլ ամպերից
 Մառախուղն անցաւ ժպտում են դաշ-
 տեր,
 Երգում են հաւքեր ծաղկոտ լեռներից
 Հրճում են պարում բնութեան զարդեր:

Ալեկործումից ծովը դադարեց,
 Նաւերին հանգիստ օր օր է երգում,
 Արժիւն էլ ազատ թևերը փռեց,
 Նարգիզն ու շուշան իրար են զրկում:

Այգեան ցօղն ու շող արևի շողը
 Կեանք են ստեղծում աշխոյժ գեղեցիկ,
 Չքացնում երկնից սև սաւան քօղը,
 Ծաղկում, ծիծաղում ամենայն բարիք:

Դու էլ գարկ երգիչ, թառիդ լարերին,
 Ու երգէ անոյշ սրտիդ խորքերից,
 Քո քաղցը ձայնից և քօ սիրելին
 Գուցէ շուտ զարթնի իր խորունկ քնից:

ԶԻՆՒՈՐԻ ԿԻՆԸ

Խղճուկ նստած ծովի ափին մոլորած,
 Ալիք փրփուր պար են բռնել բոլորած,
 Դար ու բլուր իրար շալակ են թռնում,
 Կրկին սիրով գիրկ, ծոց ընկած ընթա-
 նում,

Մէկ էլ յանկարծ ափերից դուրս են
 վիժում,
 Իսկ ես ապշած դիտում եմ լուռ ու
 արտում:

Սուբայ նաւր իմ աչքերից հեռացաւ,
 Գնաց տարաւ, արդեօք նա ինձ մոռացաւ,
 Նա իմ եարն էր, ինչու գնաց, ուր տարան,
 Միթէ չկայ այստեղ դատ ու դատարան,
 Ես մնացի ծովի ափին չոր քարին,
 Մորը շար կարօտակէզ իմ եարին:

ԴԱՐԵՒՈՐ ԱՌԻԻԾԸ

Մամուտ ու մույլ ժայռերի խորշում
 Ալէկոծ ծովի եզերքին ընկած,
 Կիզող արևից դէմքըն էր թորշում
 Մի հօր առիւծ խոր վերքեր զրկած:

Այստեղ միայնակ զօրեղ մուռնչից
 Կարծես լեռներին գուման է գալիս,
 Ժայռի պինդ կուրծքը պողպատ է լանջից
 Յուզւած խփելուց կայծակ է տալիս:

Գեհէն աչքերից զայրոյթի շանթեր
 Որպէս հրաբուխ հեռու, գուրս ժայթքեց
 Թէև կնշկանդած հաստ, պինտ, շղթաներ
 Հուժկու ցնցումից ժայռ, շղթայք պայ-
 թեց:

Եւ ահա խորշից մամուտ ու մույլ
 Թուաւ, գուրս թուաւ վանդակը փշրեց,
 Անյաղթ առիւծը սուբայ հրաքայլ
 Թակարդ ու շղթայք հիմքից խորտակեց:

ՆԻԷՐ ՀՍԿԱՅ ՀԵՐՈՍԻՆ

Երբ լսում եմ հերոսական համբաւը
 Մրախ խորքում մի հրդեհ է բռնկում,
 Թշնամեաց դէմ փոթորկաբար արշաւը
 Զադիր տաճկաց սարսափ ու մահ է
 սփռում:

Դու ուզմազէտ աժդահա ես անվեհեր,
 Ինչ կողմ թեքւիս աստղերդ վառ շող-
 շողան,
 Թէկուզ լինին քիւրդ ու տաճիկ հազար-
 ներ,
 Երբ որ գուրս գաս տերևի պէս կըզո-
 դան:

Ուր որ երթաս վեհ իշխանի մեծ փառքով

Դիմաւորեն քեզ հայկազունք զունդ չի
 զունդ,
 Զբօսանքդ լինի սօկեկուռ կառքով
 Ամբիծ արեամբ, էսկ թորգոմեան քաջ
 սերունդ:

Դու հարթում ես հէզ հայ ազգին նոր
 շաւիղ,
 Քանդում փշրում հին դարեւր շղթաներ,
 Եւ նւագում սէր ներշնչող հուր տաւիղ,
 Զօրացան քո ընկած թմբած եղբայրներ:

Անյաղթ առիւծ Անդրանիկ,
 Դու փրկում ես մեր որդիք
 Դաժան լծէն դարեւր
 Եւ սուրբ վաթան հայրենիք,
 Անվախ կուրծքդ դէմ դրած,
 Դարձար պաշտպան Անդրանիկ:

ԱՆԴՐԱՆԻԿԸ ԳԱՂԻՍ Է

Այն ինչ փոշի է երկինք բարձրացաւ,
 Կարծես ասկեար է դէպ մեզ է գալիս,

Զօրացէք, տղէրք՝ ահա մօտեցաւ
 Ամպերի նման կայծակ է տալիս:

Զորս կողմը բոցեր, խարոյկ է վառած,
 Շուինդ, գզորդից գետինն է սնքում,
 Անդուախ նման թեւերը փռած,
 Սարերի սիրտը սարսափ է գցում:

Տեսնում էք նորան ալ ձիուն նստած,
 Տեսէք ինչպէս մէկ հեղեղ է գալիս,
 Նա գնդապեան է սուրբ դուրս քաշած,
 Աչքեր են մթնում, դէմքին նայելիս:

Անգրանիկն է նա, եկաւ ջան, տղէք,
 Է՛յ, ես քո եկած էդ ճամբիտ մատաղ,
 Ալ ձիաւորն է դրօշակ բացէք,
 Առաջ է անցել, առաջ անյապաղ:

Իսկ նա է, նա. մեր փրկիչն է հասաւ,
 Մէկ կրակ կտրած նժոյգն է թռնում,
 Զան մեր Անդրանիկ, ջան վեր սլացաւ,
 Նա դաժան տաճկած՝ ասկեարն է փըն-
 տում:

Դէհ, էնվէր փաշայ դուրս արի տեսնենք,
 Այս հրդեհի դէմ կրնաս զիմանայ,
 Անդրանիկի պէս զօրապէտ ունինք
 Միլիոն ասկեարէզ մէկն էլ չի մնայ:

ԱՆԴՐԱՆԻԿԻ ԿՈՉԸ

Անվախ ֆիտահներ շուրջս բոլորւէք,
 Հայրենաց սէրը ձեզ կոչ է անում,
 Անսանձ բարկութեան վրէժով այրւէք,
 Արծիւն յաղթական դրօշն է տանում:

Ինձ մօտ, դէպ ինձ մօտ, յանդուհզըն
 սրտով

Ելէք իմ եղբայրք բոլոր խորշերից,
 Տենդային արագ, խիզախ քայլերով
 Անգուսպ թռիչքով անցէք լեռներից:

Եւ ես մերկ սուրս պիտ փայլատակեմ
 Մինչև որ ուխտս տանիմ ՚ի կատար,
 Անգուլթ Օսմանեան գահը խորտակեմ
 Արեամբ պսակեմ հին դատը արդար:

ԿԱՄԱԽՈՐՆԵՐ

Հայ կամաւոր հուր անվեհեր,
 Մատաղ լինիմ քո բազկին,
 Որ ցոյց տւիր ամեն ուրեք
 Վսեմ անյաղթ հայ ազգին:

Երբ լսում եմ քաջ ֆիտահի
 Վէհ գործերդ մարտական,
 Իմ հրճանքին ու պարծանքին
 Ձէ լինելու չափ սահման:

Դու անձնւէր հոգով, սրտով
 Դէմ դրեցիր բորենուն,
 Եւ զայլերին արեան ծարաւ
 Վեր հանեցիր հայ անուն:

ՄԻ ԵՐԳԻՐ ԲՆՔՈՒԼ

Օհ ինչ սոսկալի օրերի հասանք,
 Կարծես թէ երկնից շաղւեց մեզ կրակ,

Ա ի մեր բաց աչքով ի՛նչեր չ'տեսանք,
Սնմեղներ դարձան կրքերի ճարակ:

Մայրեր փախչում են մանուկներ մո-
ռացած:

Դառն փորձանքից արցունքն աչքերին,
Ձնոտ լեռներից մերկ բուսիկ քաղցած,
Դեզ ու ճար չկայ խոցոտ սրտերին:

Չ'կայ մի տեղից փրկութեան նշոյլ՝
Արիւն արտասուք հեղեղ են կազմել,
Այգիդ աւրեցին, մի երգիւր բլբուլ,
Կործանւած երկրին բուեր են բազմել:

ԿԵԱՆՔԸ ԱՅՆ ԷՐ

Երբ մանուկ էի՝ զիւզում գառնարած,
Ի՞նչ էր կերածս, — թան ու գարի հաց,
Վազվզում էի ծաղկոտ դաշտերում,
Ոչ մի դարս չկար իմ փոքրիկ սրտում:

Անմեղ թռչնի պէս կեանք էի վարում
Ահնող ու ազատ երգում ու պարում:

Այսպէս կանցնէին կեանքիս օրերը,
Կարծես ես էի աշխարհի տէրը:

Կուրծքս միշտ բաց էր, ոտներս բոբիկ,
Ձէի հասկանում ոչ ցաւ, ոչ կարիք,
Հսկայ սարերը, կարծես ինձ համար,
Լինէին բլուր կամ հարթ դաշտավայր:

Ի՞նչ գեղեցիկ էր, ի՛նչ հրաշալի,
Թո՛ւն, հեռացան, ճ՛հ անդառնալի,
Անոյշ օրերս, այն երազները
Չկրացայ բռնել, թո՛ւն սարերը:

Այժմ մեծ մարդ եմ ու աշխարհատես
Ոչինչ չմնաց այն երազներէս,
Թէև փորս կուշտ, շորեր թանկագին՝
Մի բան չի հասնի մանկական կեանքին:

ՍԿԻՉՔ ԵՒ ՎԵՐՉ

Շատ խորհեցի դատարկ աշխարհ ծոցիդ
մէջ,
Չհասկացայ ի՛նչն է սկիզբ, ի՛նչն է վերջ,

Շատ աշխատայ դեռ վարձըս չեմ ըս-
տանում
Չ'գիտեմ թէ ինչ եմ լսում, ինչ ատենում:

Միշտ մարդկանց մէջ դէմքս ուրախ
ցոյց կուտամ,
Բայց առանձին սրտիս խորքեց կը ող-
բամ,
Հայրս մեռաւ անբաղղ անկիրթ մեծա-
ցայ,
Շատ ջանացի, դարձեալ մեծ մարդ
չգարձայ:

Ով ինչ ասեց, ես համոզւայ ասածին,
Ու շացայ խաբւած աչքիս տեսածին,
Դէմքս ազեղ, լեզուից աղքատ անուտում,
Սրարքներս մէկը մէկին հակասում:

Ոչ մէկ արհեստ կանոնաւոր չգիտեմ,
Լաւ եմ զգում որ չափազանց տգէտեմ
Միայնակ եմ անգուրթ աշխարհ ես քո
մէջ,
Զհասկացայ ինչնէ սկիզբ ինչն է վերջ:



ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

Դիմել՝ Александрополь Типографія
„Ширакъ“
Կամ հեղինակին՝ Григорию Таляницъ

47577